27. 12. 2023թ.

ՀՀ Արմավիրի մարզի << Դաշտի միջնակարգ դպրոց>>
ՊՈԱԿ-ի տնօրեն Ս.Սահակյանին
նույն դպրոցի «Հայոց լեզու» և «Գրականություն»
առարկաների ուսուցչուհի Գ.Հովհաննիսյանից

Հաշվետվություն

2023-2024 ուստարի

I կիսամյակ

7-րդ դասարան

«Գրականություն» առարկա

Թեմա՝ «Հայրենի Կարսը Ե.Չարենցի ստեղծագործություններում>>

7-րդ դասարանում սովորող 2 աշակերտների կողմից ընտրված ուսումնական նախագիծը իրականացվել է 2023 թ-ի դեկտեմբեր ամսին :

Նախագիծը նպատակ ունի 7-րդ դասարանի սովորողների մոտ ձևավորել՝

- գիտելիքներ գրողի ապրած ժամանակաշրջանի,դրա ազդեցության, Ե.Չարենցի՝ հայրենի քաղաքին նվիված ստեղծագործությունների մասին, այդ ստեղծագործությունների միջոցով բանաստեղծի՝ հայրենի քաղաքում անցկացրած մանկության և պատանեկության տարիներ մասին,
- նոր տեքստի ստեղծման կարողություն, ստացած գիտելիքը տարաբնույթ աշխատանքներում կիրառելու կարողություն,
- ստեղծագործաբար և պատասխանատու կերպով տեղեկատվական և թվային սարքերը որպես ժամանակակից աշխատանքային գործիք, իսկ համացանցը՝ որպես ուսումնական, համագործակցային և աշխատանքային հարթակ կիրառելու կարողություն:

Сканировано с CamScanner

Նախագծի աշխատանքները կազմակերպվել են այնպես, որ սովորողների մոտ ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, գործունեության տեսակների, տեխնոլոգիաների, մեթոդների կիրառման արդյունքում ուսումնառության գործընթացում ձեռք բերված գիտելիքները, ձևավորված կարողունակությունները, հմտությունները,արժեքներն ու դիրքորոշումները հնարավորիս կիրառվեն առօրյա կյանքում, տարբեր իրավիճակներում սովորողները կարողանան արագ և արդյունավետ կողմնորոշվել, արձագանքել ,առաջարկել համապատասխան լուծումներ :

Խմբային աշխատանքները , ստեղծագործությունների, վերլուծությունների, տարբեր տեղեկությունների և պատմական փաստերի ուսումնասիրությունները,զարգացնում են երևակայությունը, քննադատական և ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցման հմտությունները:

Նախագծում առաջադրված հարցերն ու առաջադրանքները նպաստում են սովորողների համեմատելու, հակադրելու, վերլուծելու, կարծիք հայտնելու , փաստարկելու և հիմնավորելու, ինքնուրույն եզրահանգումներ անելու, գնահատելու,արժևորելու և այլ կարողությունների ձևավորմանը:

Նախագծի վերջնարդյունքներով սովորողը պետք է.

- բացատրի՝ ինչ կապ է արտահայտվում պատմական իրադարձությունների, , բանաստեղծի ապրած միջավայրի և նրա ստեղծագործությունների միջև,
- կարողանա դրանք վերլուծել, համադրել, եզրահանգումներ անել,
- մտքերը ճիշտ ձևակերպել և ներկայացնել լսարանին,
- ստեղծագործաբար և պատասխանատու կերպով կիրառի տեղեկատվական և թվային սարքերը որպես ժամանակակից աշխատանքային գործիք, իսկ համացանցը՝ որպես ուսումնական, համագործակցային և աշխատանքային հարթակ:

Կատարված աշխատանքի նկարագիր :

Նախագծային աշխատանքը կազմակերպվել է «Հայրենի Կարսը Ե.Չարենցի ստեղծագործություններում» խորագրով՝ զեկույց, սահիկաշարով ներկայացում և հետազոտական աշխատանք:

Կազմվել է աշակերտների հետ արտադասարանային հանդիպումների, հաճախումների և կատարած աշխատանքները բնութագրող ու բովանդակող մատյան :

Աշակերտների հետ քննարկման արդյունքում .

1/ կատարվել է թեմայի տրոհում ենթաթեմաների,կատարվել է աշխատանքի բաժանում:

2/ Աշակերտների հետ հստակեցվել են կատարվելիք աշխատանքները: Աշակերտներից մեկը ներկայացնելու է Կարսի պատմությունը , մյուսը՝ Չարենցի ստեղծագործությունները Կարսի մասին: Նրանք գրելու են զեկուցումներ, որոնք զետեղելու են իրենց կազմած գրքույկում:Այնուհետև երկուսով պատրաստելու են սահիկաշար:

3/ Կատարվել է աղբյուրների տրամադրում :

Сканировано с CamScanner

4/ Ստուգվել են հավաքագրված նյութերը: Թղթային կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացված նյութերը ճշտվել են, կատարվել է սխալների ուղղում, քննարկում:

5 / Սահմանվել են միավորային և ձևավորող գնահատման չափանիշներ :

6/ Կազմակերպվել է նախաներկայացում ,որի ժամանակ

- աշակերտներին տրամադրվել է աջակցություն,

- շտկվել է նրանց խոսքը,սովորել են աշխատանքը պատշաճ ներկայացնել:

7/ Կազմակերպվել է նախագծի պաշտպանություն

հիմնական ներկայացման փուլում -սովորողները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները : Կարևոր է, որ սովորողները ելույթի ժամանակ իրենց ազատ էին զգում և կարողացան վարպետորեն , արտահայտիչ խոսքով ներկայացնել իրենց աշխատանքները:: Քննարկումը իրականացվեց անկաշկանդ մթնոլորտում:Սովորողների արտահայտվելու ընթացքում ուսուցիչը , դասընկերները և մյուս ներկաները ուշադիր հետևում էին ընթացքին:

8/ Գնահատում կազմակերպեցին աշակերտները և ուսուցիչը:Գնահատման արդյունքում հաշվի են առնվել նաև մասնախմբի մյուս անդամների կարծիքները :

Այսպիսով՝ կարող ենք ասել,որ նախագծային աշխատանքի ավարտին աշակերտների մեջ զարգացել է երևակայությունը, քննադատական և ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցման հմտությունները, հիշողությունը: Նախագծում առաջադրված հարցերն ու առաջադրանքները նպաստել են սովորողների համեմատելու, հակադրելու, վերլուծելու, կարծիք հայտնելու , փաստարկելու և հիմնավորելու, ինքնուրույն եզրահանգումներ անելու, գնահատելու,արժևորելու և այլ կարողությունների ձևավորմանը: Ուսումնառության գործընթացում սովորողների մոտ վերոնշյալ կարողունակությունները ձևավորել ու զարգացել են ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, գործունեության տեսակների, տեխնոլոգիաների, մեթոդների կիրառման արդյունքում:

Ուսումնական նախագծով նախատեսված վերջնարդյունքներից սովորողները արդյունքում կարողացան .

- բացատրել՝ ինչ կապ է արտահայտված պատմական իրադարձությունների, բանաստեղծի ապրած միջավայրի և նրա ստեղծագործությունների միջև,
- դրանք վերլուծել, համադրել, եզրահանգումներ անել,
- մտքերը ճիշտ ձևակերպել և ներկայացնել լսարանին,
- ստեղծագործաբար և պատասխանատու կերպով կիրառել

տեղեկատվական տեխնոլոգիաները,

- պատրաստել զեկուցում և սահիկաշար:

Ուսուցիչ՝ Գ. Հովհաննիսյան

Сканировано с CamScanner